

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<<ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳ>> ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նախագծի 1-ին կետում <<Սույն երաշխավորությունները մշակվել են>> նախադասության մեջ պետք է լինի. <<Սույն կարգը մշակվել է>>:
2. Նախագծի 1-ին կետում <<2009 թվականի հուլիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի >> հղման մեջ իրավաբանորեն ավելորդ է օրենքի ընդունման օր,ամիս, տարեթիվ նշումը /<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք, հոդված 43/:
3. Նախագծի 1-ին կետում «№» նշանը փոխարինել «N» նշանով:
4. Նախագծի 1-ին կետում նշված «Հանրակրթության պետական չափորոշիչ» IV-րդ բաժնի պահանջների կատարումն ապահովելու մասին դրույթը որոշ առումով հակասում է «Հանրակրթության պետական չափորոշիչ» IV-րդ բաժնի 7-րդ կետին, որը սահմանում է. <<Որակական գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորություններին համապատասխան>>, մինչդեռ Նախագծում տրված է և քանակական (միավորային) և որակական (ուսուցանող) գնահատման կարգը:
5. Նախագծի 1-ին կետում ավելորդ է <<ուսուցիչներին>> բառը:
6. Նախագծի 4-րդ կետում նշված. <<Ընթացիկ գնահատումն ուսումնական գործընթացում ուսուցչի կողմից իրականացվող բոլոր տիպերի գնահատումների համախումբն է>> արտահայտությունը կարծում ենք սխալ է, որովհետև բոլոր տիպերի գնահատումների համախմբի մեջ ընթացիկ գնահատումից բացի՝ ներառվում է նաև կիսամյակային և տարեկան գնահատումները (ամփոփիչ), ինչպես նաև հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտի (ամփոփիչ ատեստավորում) գնահատումը:
7. Նախագծի 9-րդ կետում <<անցողիկ>> բառի փոխարեն հարկ է կիրառել <<դրական>> բառը:
8. Նախագծի 23-րդ կետում պետք է լինի << կարգի 22-րդ կետում նշված >>: